

Հրաւիրուած էր Երուսաղէմ ձեռնադրելու զԳրիգոր Գանձակեցի Երուսաղէմի եպիսկոպոս եւ պատրիարք: Ձեռնադրութիւնը տեղի կ'ունենայ Ապրիլ 5ին: Աւետիս կաթողիկոսի ձեռնադրութեանս առթիւ գրած Կոնդակին պատճենն ըստ էական մասին ունիմ ձեռքիս տակ. զոր յառաջ կը բերեմ⁶:

ԿՈՆԴԱԿ ՏԷՐ ԱԻԵՏԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նամակ ողջունի եւ պարգեւաց սիրոյ եւ խաղաղութեան, քրիստոսաւանդ եւ առաքելական ի փառաւոր երջանիկ դիտապետէ տէր Աւետիս կաթողիկոսէ ամենայն < Հայոց > եւ պատրիարքէ Վաղարշապատու սուրբ Աթոռոյն Էջմիածնայ, տեղապահ եւ յաջորդ աթոռակալ եւ փոխանորդ սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, զոր եւ գրեմ ի սուրբ եւ ի փառաւորեալ աստուածազարդ եւ մեծապայծառ, յերկնահանգէտ եւ լուսածաւալ, յաստուածակոխ սուրբ քաղաքէս յերուսաղէմայ:...

Եւ ընդ անհնութեանս գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, սիրելի եւ հոգեւոր որդիք մեր ի Տէր. ես տէր Աւետիս կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարդ Վաղարշապատու սուրբ Աթոռոյն Էջմիածնայ, ի թվին Հայոց ՌԿԻ. եկի ի սուրբ քաղաքս յերուսաղէմ,

⁶ Ձեռագիր Կարմիր վանուց Գաղատիոյ Թ. 54, թղ. 136ա—157ա ըստ ցուցակագրութեան Աղան Վ. Համամճեանի: